# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/92 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Synology | Synology RS3621xs+ | Synology | Synology RackStation RS3621xs+ սերվերային պահարանում տեղադրվող 2U բարձրությամբ տվյալների պահպանման համակարգ (ՏՊՀ), որը նախատեսված է տվյալների բարձր հասանելիության, պահպանման և կառավարման համար: ՏՊՀ արտադրողի կողմից նախատեսված է տվյալների մշակման կենտրոններում շահագործման համար։ Հագեցած է Intel Xeon D-1541 8–միջուկանի 2.1 ԳՀց հաճախականությամբ սերվերային տեսակի պրոցեսորով, որը նախատեսված է բարձր թողունակության, I/O արտադրողականության, հուսալիության համար և կարող է կառավարել մեծ թվով միաժամանակյա գործողություններ ու ծանրաբեռնվածություն: ՏՊՀ հագեցած է 16 ԳԲ ECC օպերատիվ հիշողությամբ, այն մինչև 64 ԳԲ ընդլայնելու հնարավորությամբ: ՏՊՀ ունի 12 տաք–փոխարինվող 3,5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | / 2,5 դյույմանոց կրիչների սլոտեր, որոնք աջակցում են enterprise կարգի կոշտ սկավառակներ և SSD-ներ, դրանց քանակը 36 կրիչների ընդլայնելու հնարավորությամբ (հավելյալ դարակաշարեր ավելացնելու միջոցով)։ ՏՊՀ –ում տեղադրված է 12 հատ 7Tb enterprise կարգի SSD կրիչներ։ Համակարգն աջակցում է Synology RAID F1, Basic, JBOD, RAID 0, RAID 1, RAID 5, RAID 6, RAID 10 կարգաբերումներ)՝ տվյալների ամբողջականությունը և հասանելիությունը ապահովելու համար։ Կրկնակի էլ. հոսանքի սնուցման աղբյուրներ (տաք-փոխանակվող) 100-240Վ փոփոխական հոսանքով աշխատող՝ սնուցման աղբյուրներից որևէ մեկի խափանման դեպքում ՏՊՀ աշխատունակությունը պահպանելու համար ավտոմատ մյուսին փոխանցման աջակցությամբ։ 4 ակտիվ հովացուցիչներ համակարգի հովացման համար։ 19 դյույմանոց սերվերային պահարանում ՏՊՀ տեղադրելու համար նախատեսված RKS-02 բացվող ռելսերի հավաքածու։ Snapshot Replication և Backup աջակցություն, որը թույլ է տալիս կարգաբերել տվյալների պահուստավորում առկա Synology և առաջարկվող ՏՊՀ միջև՝ առանց հավելյալ ծրագրերի, սարքերի, արտոնագրերի անհրաժեշտության, ՏՊՀ–ներից որևէ մեկի խափանման (iSCSI, NFS, SMB, FTP կամ վեբ սերվիսների խափանում, հասանելի դիսկային հիշողության ծավալի սպառում, կապուղու խափանում և այլ ապարատածրագրային խափանումներ) դեպքում ավտոմատ անցում մյուսին։ ՏՊՀ աջակցում են իրական ժամանակում տվյալների ռեպլիկացիա, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | պաշտպանություն ransomware–ներից snapshot–երի հիման վրա։ Սերվերների, վիրտուալ մեքենաների, համակարգիչների ինքնաշխատ պահուստավորում ՏՊՀ–ում ներառված գործիքների միջոցով։ ՏՊՀ կարող է պահպանել ֆայլերի մի քանի տարբերակ և թույլ է տալիս վերականգնել նախորդը/ները ֆայլի վնասվելու պարագայում։ ՏՊՀ աջակցում է տվյալների AES-256 գաղտնագրում, HTTPS, FTPS, և SFTP արձանագրություններ։ Երկու հատ 10 Գիգաբիթ Ethernet ցանցային պորտեր, չորս հատ 1 Գիգաբիթ Ethernet պորտեր: 2 հատ USB 3.2 պորտ: Երկու PCIe Gen3 սլոտ լրացուցիչ քարտեր ավելացնելու համար: Տվյալների պաշտպանություն և կրկնօրինակում, ներկառուցված snapshot, կրկնօրինակում և պահուստավորման գործառույթներ աղետից արդյունավետ վերականգնման համար, ներառյալ ամպային և հիբրիդային պահուստավորման տարբերակների աջակցությունը: Տվյալների ավտոմատացված աստիճանավորման, քեշավորման և տվյալների կյանքի ցիկլի կառավարման համար ներառված ծրագրակազմ՝ արագագործության ու տվյալների պահպանման արդյունավետությունը օպտիմալացնելու համար: Տվյալների գաստնագրման ամբողջական աջակցություն՝ ներառյալ մուտքի վերահսկման աջակցություն, ֆայլերի անվտանգ փոխանակում և առաջադեմ օգտվողի/խմբի թույլտվություններ: ՏՊՀ համատեղելի է վիրտուալացման առաջատար հարթակների հետ, ինչպիսիք են VMware-ը, Hyper-V-ը և Citrix-ը, և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ինտեգրվում է դրանց հետ iSCSI, NFS արձանագրությունների կիրառմամբ: ՏՊՀ աջակցում է SMB, AFP, NFS, FTP, WebDAV, CalDAV, iSCSI, Telnet, SSH, SNMP, VPN (PPTP, OpenVPN, L2TP) ցանցային արձանագրություններ՝ տարբեր միջավայրերում ինտեգրման համար: ՏՊՀ ունի IP անվտանգության տեսախցիկների դիտման և կառավարման հատկության հնարավորություն: ՏՊՀ համատեղելի է Synology Central Management System (CMS) համակարգի հետ՝ դրա ինտերֆեյսի միջոցով հեռավար կառավարման, միկրոծրագրի թարմացումների, մոնիթորինգի և կարգաբերման հնարավորությամբ: ՏՊՀ ունի համակարգի վիճակի մոնիթորինգի ներկառուցված գործիքներ, ներառյալ ջերմաստիճանի, էլեկտրաէներգիայի սնուցման և ցանցի աշխատանքի մոնիթորինգ, որը կարող է տրամադրել հարմարեցված ծանուցումներ ապարատային հնարավոր խնդիրների և համակարգի կատարողականի շեմերի համար: ՏՊՀ կարող է API հաղորդագրությունների միջոցով ինտեգրվել երրորդ կողմի մոնիթորինգի, կառավարման, ավտոմատացման համակարգերի հետ: Սարքավորման 3 տարվա երաշխիք: Արտադրողի առցանց տեխնիկական աջակցություն՝ ներառյալ օպերացիոն համակարգի և կրիչների միկրոծրագրային թարմացումները: Մատակարարը ներկայացնում է արտադրողից հավաստագիր-նամակ առ այն, որ սարքերը նախատեսված են Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառքի և սպասարկման համար: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЗАО ЮНИКОМП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/92 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | |